ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/2915-2026

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-1192-18.11.2025-ՏՀ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

1. Առաջարկվում ենք շտկել տեխնիկական վրիպակը՝ օրենքի նախագծի ողջ տեքստում «ԵՏՄ» հապավումը փոխարինել «ԵԱՏՄ» հապավումով՝ համաձայն «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 1-ին հոդվածի:

2. Նախագծի 8-րդ հոդվածը առաջարկում ենք լրացնել նոր 1-ին կետով հետևյալ բովանդակությամբ՝

«1) 13-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով »

Հաջորդ պարբերությունը համարակալվել է որպես 2-րդ կետ:

3. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին համապատասխան իրավական ակտի ուժի մեջ մտնելու ժամկետի որոշակիության ապահովման տեսանկյունից՝ օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը հստակ սահմանելու համար առաջարկում ենք օրենքի նախագծի 19-րդ հոդվածի 1-ին մասում «սույն օրենքի 13-րդ հոդվածի դրույթների կիրարկումն ապահովող համապատասխան ծրագրային ապահովման աշխատանքներն ավարտելու օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինել «2027 թվականի հունվարի 1-ից» բառերով:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ